

սուրբ գրությունների հատվածների շուրջ, Սուրբ Հոգու զորությունը կենդանարկի ճշմարտությունները ձեր մտքի և սրտի մեջ որպես ապահով հիմք այս անորոշ ժամանակներում, որոնցում մենք ապրում ենք: Որպես ծնողներ պատրաստեք ձեր երեխաներին այն մարտահրավերներին, որոնց նրանք կհանդիպեն: Ուսուցանեք նրանց ճշմարտությունը, խրախուսեք նրանց ապրել ըստ դրա և նրանց հետ ամեն ինչ լավ կլինի, անկախ նրանից, թե որքան ուժգին կցնցի նրանց աշխարհը:

Այս Չատկին վճռեք Տեր Հիսուս Քրիստոսին դարձնել ձեր տան կենդանի առանցքը: Հետևեք, որ ձեր յուրաքանչյուր որոշում, լինի դա հոգևոր, թե ֆիզիկական բնույթի, առաջնորդվի այս մտքով. «Բ՞նչ կուզենար Տեր Հիսուս Քրիստոսը, որ ես անենի»: Երբ Փրկիչը ձեր տան կենտրոնն է, տունը լցվում է խաղաղությամբ և հանգստությամբ: Խաղաղ վստահության ոգի է ներխուժում այն տուն, որտեղ երեխաները և չափահասները նույն մտածելակերպն են կրում:

Դեպի լավը մշտական փոփոխություն կատարելու լավագույն ճանապարհը Հիսուս Քրիստոսին ձեր օրինակը, իսկ Նրա ուսմունքները՝ ձեր կյանքի ուղեցույցը դարձնելն է:

Եթե դուք անհնազանդ եք եղել Նրա պատվիրաններին և անարժան եք ձեզ զգում գալու, հասկացեք, որ այդ պատճառով է Տերը, Հիսուս Քրիստոսը, տվել Իր կյանքը: Իր Քավության միջոցով Նա ընդմիշտ բացել է նման սխալները հաղթահարելու, սխալ ընտրություններից ապաշխարելու և Նրա ուսմունքներին հակառակ կյանքով ապրելու բացասական հետևանքները վերացնելու հնարավորությունը:

Փրկիչը սիրում է մեզանից յուրաքանչյուրին և կբավարարի ցանկացած կարիք, եթե մենք հնազանդությամբ արժանի լինենք բոլոր օրհնություններին, որոնք Նա ցանկանում է, որ մենք ունենանք այս նրկանգնողի վրա: Ես սիրում եմ Նրան և հիանում եմ Նրանով: Որպես Նրա լիազորված ծառա ես հանդիսավորությամբ վկայում եմ իմ էության ողջ ունակությամբ, որ Նա ապրում է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



**Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ**  
Յոթանասունի Նախագահությունից

## Դարձեք դեպի Տերը

*Երբեք թույլ մի տվեք աշխարհի հանգամանքները ձեզ հոգևոր վնաս պատճառել:*

Տարիներ առաջ, ես ականատես եղա մի ցավալի դեպքի, որը դարձավ ողբերգություն: Մի երիտասարդ զույգ շուտով ունենալու էր իր առաջնեկին: Նրանց կյանքը լի էր սպասումով, և նրանք ոգևորված էին այդ սքանչելի իրադարձությամբ: Ծննդաբերության ժամանակ բարդություններ առաջացան և նորածինը մահացավ: Սրտի ցավը վերածվեց վշտի, վիշտը՝ բարկության, բարկությունը մեղադրանքի, իսկ մեղադրանքը վերածվեց վրեժխնդրության՝ հանդեպ բժիշկը, որին լիովին պատասխանատու էին համարում: Ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները, միանալով ձգտում էին խորտակել բշկի համբավը և կարիերան: Երբ արդեն շաբաթներ և ապա ամիսներ տևած դառնությունը հյուծել էր ընտանիքին, նրանց դառնությունը դարձավ դեպի Տերը: «Ինչպե՞ս կարող էր Նա թույլ տալ նման սոսկալի բան»: Նրանք հրաժարվում էին Եկեղեցու դեկավարների և անդամների հոգևոր սփոփանքից և ժամանակի ընթացքում հեռացան Եկեղեցուց: Դա այժմ արդեն իր ազդեցությունն է թողել այդ ընտանիքի չորս սերունդների վրա: Եթե մի ժամանակ Տիրոջ և Նրա Եկեղեցու հանդեպ հավատք և նվիրվածություն կար, այժմ արդեն տասնամյակներ է, ինչ այդ ընտանիքի ոչ մի անդամ հոգևոր ակտիվության մեջ չէ:

Կյանքի ամենադժվար իրավիճակներում հաճախ կա խաղաղության միայն մեկ աղբյուր: Խաղաղության Իշխանը՝ Հիսուս Քրիստոսը, Իր շնորհն է առաջարկում, հրավիրելով. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթեոս ԺԱ.28-29): Այնուհետև Նա խոստանում է. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ» (Հովհաննես ԺԴ.27):

Իմ հայրական տատիկն ու պապիկը երկու զավակ ունեին՝ որդի (իմ հայրը) և դուստր: Հավայան կղզիներում միսիա և զինվորական ծառայություն կատարելուց հետո, հայրս կղզիներ վերադարձավ 1946թ.՝ որպես մասնագետ հաստատվելու և իր ընտանիքը մեծացնելու համար: Նրա ծնողները և քույրը ապրում էին Սուր Լեյք Սիթիում: Նա ամուսնացավ 1946թ. և չորս տարի անց երեխա էր սպասում: Մի շատ հատուկ բան կա ծնողների համար, ովքեր սպասում են իրենց դստեր (այս դեպքում միակ դստեր) առաջին ծննդաբերությանը: Ոչ ոք չգիտեր, որ նա զույգ է սպասում: Ցավոք, նա և զույգերը մահացան ծննդաբերության ժամանակ:

Իմ տատիկն ու պապիկը վշտի մեջ էին: Սակայն, վիշտն անմիջապես նրանց դարձրեց դեպի Տերը և Նրա Քավությունը: Առանց

խորանալու, թե ինչու դա պատահեց և ով էր մեղավոր, նրանք կենտրոնացան արդարակյաց կյանքով ապրելու վրա: Իմ տատիկն ու պապիկը երբեք հարուստ չեն եղել, նրանք երբեք սոցիալական բարձր խավին չեն պատկանել, երբեք Եկեղեցում բարձր պաշտոններ չեն զբաղեցել, նրանք պարզապես նվիրված Վերջին Օրերի Սրբեր էին:

1956թ. թռչակի անցնելուց հետո նրանք տեղափոխվեցին Հավայան կղզիներ՝ իրենց միակ ժառանգների հետ լինելու համար: Հաջորդող տարիներին նրանք սիրով էին ապրում իրենց ընտանիքի հանդեպ, ծառայում էին Եկեղեցում, և, հիմնականում, նրանք պարզապես վայելում էին իրենց համատեղ կյանքը:

Նրանք երբեք չեն ցանկացել առանձին լինել և անգամ խոսում էին, որ եթե իրենցից մեկը ավելի շուտ մահանա, մի միջոց գտնի իրենց վերամիավորվելու համար: Իրենց 90 ամյակի նախաշնամին 65 տարի ամուսիններ լինելուց հետո նրանք իրենց բնական մահով մահացան՝ միմյանցից սուկ ժամերի տարբերությամբ: Լինելով նրանց եպիսկոպոսը եւ վարեցի նրկու թաղման արարողություն:

Արթ պապիկի և Լու տատիկի հավատարմությունը հատկապես դժվարության պահին, իր ազդեցությունն է թողել իրենց այժմ արդեն չորս սերունդների վրա: Ուղղակիորեն և խորապես այն ազդել է իրենց որդու (հայրիկիս) և մայրիկիս վրա,

երբ ծնողներիս դուստրը, իրենց ամենափոքր դուստրը, մահացավ ծննդաբերության ժամանակ առաջացած բարդությունների հետևանքով: 34 տարեկանում, ծննդաբերությունից 10 օր անց, նա մահացավ թողնելով իր 10 օրականից մինչև 8 տարեկան չորս երեխաներին: Իրենց նախորդ սերնդի օրինակն աչքի առաջ, իմ ծնողներն առանց տատանվելու սփոփանք փնտրեցին Տիրոջից:

Ողջ աշխարհում և Եկեղեցում անդամ լինելը և մեծ ուրախություն է և մեծ ցավ: Երկուսն էլ ծրագրի մաս են: Առանց մեկի մենք չենք կարող իմանալ մյուսի մասին: «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25) և «քանզի, անպայման պետք է, որ հակադրություն լինի ամեն ինչում» (2 Նեփի 2.11) չեն հակասում, այլ լրացնում են իրար: Նկարագրելով իր դարձրդնայի Տերը Ալմա կրտսերն ասաց. «Իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր» (Ալմա 36.20):

Ումանք հաղթահարում են մեծ խնդիրներ, մյուսները թույլ են տալիս, որ փոքր հարցերը մեծանան: Սայմոնոս Ռայդերը Քամբելիտ կրոնի ղեկավար էր, որը լսեց Եկեղեցու մասին և հանդիպեց Չոզենֆ Սմիթին: Այդ հանդիպումից ոգեշնչված նա միացավ Եկեղեցուն 1831թ. հունիսին: Դրանից անմիջապես հետո նա կարգվեց երեց և կանչվեց միսիա ծառայելու: Սակայն Առաջին Նախագահության կողմից կանչվելու նամակում և իր պաշտոնապես քարոզելու նշանակման մեջ նրա անվան մեկ տառասխալ էր արվել: Նրա ազգանունը գրվել էր Ռիդեր, և ոչ թե՛ Ռայդեր, որը միշտ ձևն էր: Դա նրա մոտ կասկած հարուցեց իր կոչման և նրանց հանդեպ, ում կողմից եկել էր այդ նամակը: Նա որոշեց միսիայի չգնալ և հեռացավ, որն ատելություն ծնեց նրա մեջ, և նա դարձավ Չոզենֆի և Եկեղեցու ընդդիմադիրը: 1832թ. մարտին, երբ Չոզենֆ Սմիթը և Միդնի Ռիգդոնը տնից գիշերը դաժանաբար դուրս էին տարվել և ձյունով ու փնտուրներով պատվել, մի ձայն էր լսվել, որը գոռացել էր. «Սայմոնոս, Սայմոնոս, որտե՞ղ է ձյունով դույրը» (*History of the Church*, 1:262–263): 10 ամսից էլ քիչ





ժամանակահատվածում Մայնոնդս Ռայդերը փափագող նորադարձից դարձավ ամբոխի ղեկավար, նա հոգևոր անկում ապրեց, որի համար սկիզբ հանդիսացավ վիրավորանքը, նրբ իր անունը տառասխալով էր տպվել: Խնդրի մեծությունը չէ կարևոր, այլ դրա հանդեպ մեր արձագանքը, որը կարող է փոխել մեր կյանքի ընթացքը:

Սարգարե Չոզնֆ Մսիթը անձնական ողբերգությունը և ընդդիմությունը հաղթահարելու օրինակ է ծառայել: Լիբերթի Բանտի անմարդկային շրջապատում նրան հայտնվեց այս աստվածային հրահանգը (որը մասնավորապես տալիս էր մինչ այդ Չոզնֆի կյանքի նկարագրիչը և նաև նախագգուշացում): Եթե «հիմարները ծաղրեն քեզ, ... եթե դու կանչվես անցնելու նեղության միջով. եթե դու վտանգի մեջ լինես կեղծ եղբայրների մեջ ... Եթե դու մեղադրվես ամեն տեսակ կեղծ մեղադրանքներով. եթե քո թշնամիները հարձակվեն քո վրա, ... եթե քեզ գցեն հորը կամ մարդասպանների ձեռքը ... և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու. և այդ ամենից բացի, եթե դժոխքի ծնոտները լայն բացեն նրախը, որպեսզի քեզ կույ տան, իմացիր, որդի՛ս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար» (Վևու 122.1, 5-7): Ապա հետևում է հիմնական խոսքը. «Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած: Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա»

(հատված 8): Դրանից հետո տրվում են ստույգ հրահանգը և մեծ խոստումները: «Հետևաբար, շարունակիր ճանապարհդ, և ... մի վախեցիր նրանից, ինչ կարող է անել մարդը, քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից» (հատված 9):

Հաջորդող տարիներին Չոզնֆ Մսիթը շարունակեց արդարակեցորեն տոկալ նեղություններով լի կյանքում: Նա տվեց այս հավատքով լի հեռանկարը. «Ինչ վերաբերում է վտանգներին, որոնց միջով ես կանչված եմ անցնելու, դրանք ինձ չնչին բան են թվում ... խորը ջրերում լողալն ինձ համար սովորական է դարձել ... ես ... նեղության մեջ փառք եմ տալիս ... քանզի ... Աստված ... ինձ այդ ամենից ազատել է և կազատի նաև սրանից հետո» (Վևու 127.2): Մշտական հակառակությունը հաղթահարելու Չոզնֆի վստահությունը պայմանավորված էր մշտապես Տիրոջը դառնալու նրա ունակությամբ:

Եթե զգում եք, որ ճիշտ վերաբերմունքի չեք արժանացել ինչ-որ մեկի կողմից (կլինի ընտանիքի անդամ, ընկեր, Եկեղեցու անդամ, Եկեղեցու ղեկավար, թե գործընկեր), կամ սխալ բան է տեղի ունեցել (լինի դա սիրելի մահ, առողջական խնդիրներ, ֆինանսական խնդիրներ, բռնություն, թե հակումներ), խնդրին նայեք ուղիղ և ձեր ողջ ուժով: «Շարունակիր ճանապարհդ» (Վևու 122.9), անձնատուր լինելն ընտրություն չէ: Եվ առանց հապաղելու

դարձեք դեպի Տերը: Գործադրեք Նրա հանդեպ ձեր ողջ հավատքը: Թույլ տվեք, որ Նա կրի ձեր բեռը: Թույլ տվեք, որ Նրա շնորհը թեթևացնի ձեր բեռը: Մեզ խոստում է տրվել, որ «չնք տանի ոչ մի ձևի չարչարանքներ, այլ դրանք կույ կզնան ուրախությանը Քրիստոսի» (Ավմա 31.38): Երբեք թույլ մի տվեք աշխարհի հանգամանքները ձեզ հոգևոր վնաս պատճառեն:

Իր ամենակարևոր գործը՝ Քավությունը կատարելիս պահանջվում էր, որ Հիսուսն իջներ «բոլոր բաներից ցած» (Վևու 88.6) և կրեր «բոլոր մարդկանց ցավերը» (2 Նեփի 9.21): Ուստի, մենք հասկանում ենք, որ Քավությունն ավելի մեծ նպատակ ուներ, քան մեղքը հաղթահարող միջոց լինելը: Ողջ աշխարհում նվաճումներից այս մեծագույնը Փրկչին գործություն է տալիս կատարելու այս խոստումը. «Եթե դուք սրտի ողջ նվիրվածությամբ դառնաք դեպի Տերը, և ղնեք ձեր վստահությունը նրա վրա, և ծառայեք նրան մտքի ողջ ջանասիրությամբ, եթե դուք անեք այս ... նա կազատի ձեզ ճորտությունից» (Մոսիա 7.33):

Այս առավուտ Չատիկը տոնելիս եկեք դառնաք դեպի Տերը, մեր «առավուտյան պայծառ Աստղը» (Հայտնություն ԻԲ.16): Ես վկայում եմ, որ Նա հավետ կուսավորի մեր ճանապարհը, մեր ճշմարտությունը և մեր կյանքը (տես Հովհաննես ԺԴ.6), Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■